

ԵԶՆԻԿ ԱԲԵՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ

Հայ եկեղեցին երկար դարերի մաքառումների հուշակերտ մի պատմություն ունի: Այդ մաքառումների հիմնական էությունը կազմել են դավանաբանական զանազան հարցեր:

Այդ մաքառման շրջանին ստեղծվել է հարուստ ու արժեքավոր հայ դավանաբանական գրականությունը, որը սակայն, ցավոք սրտի, հիմնականում թաղված է պատմության քողի՝ մագաղաթյա և թղթյա ձեռագրերի մեջ և երբեմն խույ աղաղակում է իրեն բաժին ընկած այդ անարդարության համար:

30-ամյա «Էջմիածին» ամսագիրը, լինելով հայ եկեղեցու դեկավար կենտրոնի պաշտոնաթերթը և միակ կրոնական ամսագիրը Հայաստանում, իր էջերում երբեմն տեղ է տվել արժեքավոր դավանաբանական հոդվածների և բնագրերի, որոնք և միշտ կենդանի են պահել հայ դավանաբանական գրականության բազմակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը հայ հոգևորականների և աշխարհիկ գիտնականների գիտակցության մեջ:

Հայ դավանաբանական գրականությունը սկիզբ է առնում Ե դարի 30-ական թվականներին ս. Սահակ-Մեսրոպյան գրական-մատենագրական, կրթական գործունեության

շրջանում: Հայ դավանաբանական գրականությունը, որը մեր եկեղեցական գրականության ամենահարուստ ճյուղերից մեկն է հանդիսանում, մաքառման ու պայքարի մի գրականություն է ոչ միայն ի պաշտպանություն հայ եկեղեցու ուղղափառության, այլ նաև հայասպահականման և հայ նկարագրի ինքնուրույնության:

Ե դարի հայ դավանաբանական մտքի ու քրիստոսաբանական մտածողության արժեքավոր էջերից են ս. Սահակ Պարթևի, ս. Մեսրոպ Մաշտոցի գրած թղթերը 431—440 թթ. հունաց Պրոկղ Պատրիարքին, Ակակիոս միտրոպոլիտին, ինչպես նաև Մովսես Խորենացու, Հովհան Մանդակունու և այլոց դավանաբանական թղթերն ու ճառերը:

Ե դարի 80-ական թվականներին հայերենի է թարգմանվում Ալեքսանդրիայի Պատրիարք և ուղղափառ միաբանության պարագլուխ Տիմոթեոս Կուզի «Հակաճառություն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդոնի» ընդհանուր եկեղեցական գրականության մեջ դարագլուխ կազմող աշխատությունը, որով և պաշտոնապես հայ եկեղեցին Հովհան Մանդակունի կաթողիկոսի օրով (478—490) ճշտում է իր վերաբերմունքը ընդդեմ Քաղկեդոնի ժողովի: Երկար ժա-

մանակ Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը հայ հոգևորականի համար եղել է հզոր մի պատվար՝ մաքառելու և՛ նեստորականության, և՛ քաղկեդոնականության դէմ:

Ը դարում հայ դավանաբանական գրականության պատմությունը թեակոխում է մի նոր դարաշրջան, երբ Դվինի Հայրապետանոցում կազմվում են երկու նշանավոր «Կնիք Հաատոյ» և «Գիրք թղթոց» ժողովածուները:

Հետագա դարերում ևս հարուստ և արժեքավոր էջեր են արձանագրվել հայ դավանաբանական գրականության պատմության մեջ:

Ուրախությամբ պետք է արձանագրել, որ այդ պատմության առանձին հարցեր իրենց լուսաբանությունն են ստացել «Էջմիածին» ամսագրի էջերում:

Մեր այս հոդվածի նպատակն է ներկայացնել «Էջմիածին» ամսագրում տպագրված դավանաբանական բնույթի հոդվածներն ընդհանուր գծերով:


«Էջմիածին» ամսագրում հրատարակված դավանաբանական բնույթի առաջին հոդվածներից առանձին արժեք է ներկայացնում Լ. Մ. Մելիքսեթ-Բեկի «Մի փորձ «Գիրք թղթոց»-ի թերի մասերի վերականգնման ուղղությամբ» հոդվածը (1960, 2, 28—35):

Հայ մատենագրության մեջ «Գիրք թղթոց»-ը մեկն է մեծ հոշակ վայելող այն երեք ժողովածուներից («Գիրք թղթոց», «Կնիք Հաատոյ», «Կանոնագիրք»), որոնք սկիզբ են առել Ե—Ը դարերում: Այս ժողովածուներից առաջին երկուսը մեզ են հասել մեկական հազվագյուտ ձեռագիր օրինակներով: «Գիրք թղթոց»-ի օրինակը, արտագրված 1298 թ. Կիլիկիայում, գտնվելիս է եղել Կ. Պոլսում՝ Անտոնյան հայ կաթողիկ վանքում, որի վրայից ընդօրինակվելով հրատարակվել է 1901 թ. Թիֆլիսում: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Գիրք թղթոց»-ի ձեռագիրը, ի թիվս այլ ձեռագրերի, փոխադրվում է Լիբանանի Ջմմառի հայ կաթողիկ վանք, ուր և գտնվում է այժմ:

«Գիրք թղթոց»-ի հրատարակումից մի տարի հետո պարզվեց, որ թեև այդպիսի մի ընտիր պատմական աղբյուր թերի է հասել մեզ, սակայն հնարավոր է այդ պակասը լրացնել այլ ձեռագրերից: Այսպիսով հրատարակվում է Հ. Գլուխանդանյանի ««Գիրք թղթոց»-ի պակասները և նրանից դուրս մնացած թղթերը» վերնագրով հոդվածաշարը («Արարատ», 1902, էջ 560—569, 748—753):

Հոդվածագիրը, ժամանակին կազմելով Վրաստանի պետական թանգարանի հայկ-


րեն ձեռագրերի ցուցակը, հայտնաբերում է 1316 թ. արտագրված մի ձեռագիր, որը մի տեսակ փորձ է «Գիրք թղթոց», «Կնիք հաատոյ» և «Կանոնագիրք» կոչված հավաքածուների միաձուլման:



Լ. Մ. Մելիքսեթ-Բեկը այս հոդվածով մի նոր փորձ է կատարում՝ լրացնելու «Գիրք թղթոց»-ի թերի մնացած որոշ մասեր, ըստ իր հայտնաբերած վերոհիշյալ ձեռագրի տվյալների:

Ե դարի երկրորդ կեսի հայ դավանաբանական մտքի վերաբերյալ արժեքավոր մի հոդված է հրատարակում Ե. Տեր-Մինասյանը՝ «Ե դարի հայ եկեղեցու պատմության և գրականության մի քանի հանգուցային հարցերի շուրջը» վերնագրով (1962, Ե, 37—44, 2, 45—55):

Հողվածագիրը մատնանշում է մի քանի կարևոր հարցեր՝ կապված Ե դարի հայ եկեղեցու պատմության և գրականության հետ, որոնք մինչև այսօր դեռ չեն ստացել իրենց լուծումը և շարունակում են լուրջ վիճարկության ստարկա մնալ: Այդ հարցերը հետևյալներն են.



նում Ե դարում Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի կողմից սուր պայքար մղվել է իրոք, թե այդ պայքարը մեր ժամանակի բանասերների հերյուրանք ու գլուխ է, ինչպես կարծում և պնդում են ոմանք (Ս. Մալխասյանց և ուրիշներ):

Ե.—Թաղետո ստաքյալի շուրջ Հայաստանում կազմված և տարածված ավանդությունը ո՞ր ժամանակի գործ է. կարո՞ղ է այն կազմված լինել Ե դարի երկրորդ կեսին, շուրջ 470 թվականին, ինչպես պնդում է Ս. Մալխասյանցը:

Գ.—Հայոց եկեղեցու Ե դարի պատմության համար ի՞նչ արժեք են ներկայացնում վրաց Արսեն կաթողիկոսի տված տեղեկությունները:

Է.—Ի՞նչ կերպարանք կատանար ընդհանուր պատմական զարգացումը հայերի մեջ, եթե նրանք ընդունած լինեին Քաղկեդոնի ժողովի որոշումները:

Ե. Տեր-Մինասյանը, սուսք քաշելով այս հարցերը, համառոտակի մի քանի կարևոր դիտողություններ է անում, որով այդ հարցերը ըստ հնարավորության ավելի լուսաբանություն են ստանում:

1967 թ. Դ համարում (էջ 50—55) տպագրվում է Հ. Մ. Բարթիկյանի «Իսահակ Անգեղոս կայսեր պատասխան նամակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային»:

Հեղինակը սույն հոդվածը հրատարակում է որպես փաստաթուղթ, որը ցույց է տալիս հայ եկեղեցու դերն ու նշանակությունը Արևելքում Բյուզանդական Կայսրության շրջանին և այն քաղաքական ակնկալությունը, որ ունեն Բյուզանդիան հայ ժողովրդի դավանափոխությանը՝ եկեղեցական միության բողի տակ:

Հ. Մ. Բարթիկյանը նախ անդրադառնում է Գրիգոր Տղայի և Իսահակ Անգեղոս կայսեր ժամանակ տեղի ունեցած հայ-բյուզանդական եկեղեցական հարաբերություններին, դավանաբանական հողի վրա, ապա հրատարակում Իսահակ Անգեղոս կայսեր պատասխան նամակը հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային: Իսահակ Անգեղոսի պատասխան նամակի քաղաքական պատմության հարցերին վերաբերող առանձին հատվածներ հեղինակը թարգմանաբար հրատարակել էր «Բաներ Մատենադարանի» 4-րդ գրքում: Գտնելով, որ նամակի՝ դավանաբանական հարցերին նվիրված մասը ևս հետաքրքրություն կներկայացներ հատկապես հայ եկեղեցու պատմությանը զբաղվող մասնագետներին, հեղինակը նպատակահարմար է գտել նամակը հայերեն թարգմանությունը ներկայացնել ամբողջությամբ:

«Էջմիածին» ամսագիրը առանձին կարելիություն է տվել հայ եկեղեցու դավանա-

ա.—Հայոց եկեղեցին կամ թեկուզ նրա ականավոր ներկայացուցիչներից մեկը Ե դարում ընդունել է Քաղկեդոնի 451 թ. ժողովի որոշումները, և ընդհանրապես Քաղկեդոնի ժողովը որևէ դեր խաղացել է հայերի կյանքում Ե դարի երկրորդ կեսի ընթացքում:

բ.—Ինչպիսի՞ հակամարտ մտավորական հոսանքներ են եղել հայերի մեջ Ե դարի երկրորդ կեսին, և ի՞նչ խնդրի մեջ է եղել նրանց՝ հակամարտության էությունը, կամ այդ հակամարտության որևէ արտահայտություն հասել է մեզ:

գ.—Ի՞նչ աղանդներ են եղել Հայաստանում Ե դարում, և նրանք առհասարակ որևէ վտանգ ներկայացրել են հայոց եկեղեցու և ժամանակի մտավորականության և մտավոր շարժման համար:

դ.—Նեստորականների դեմ Հայաստա-

բանությանը և այս նկատառումով վերահրատարակել է ս. Ներսես Ընդհարու «Սահմանք հաստոյ Հայաստանեայց եկեղեցւոյ... ի խնդրոյ աստուածասէր թագաւորին Հոռոմոց Էմանուէլի» գրութիւնը ըստ «Թուղթք միաբանութեան գրեալ առ Յունս՝ վասն միութեան եկեղեցւոյ» (Էջմիածին, 1865, էջ 163—176) գրքի (1969, Բ, 34—39):

Ապա «Էջմիածին» ամսագրի էջերում ներկայացված է «Սահմանք հաստոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» թղթի աշխարհաբար թարգմանությունը, որ կատարել են հոգևոր ճեմարանի դասախոսներ Արթուր Հատիսյանը, Պարզև Ծահրազյանը և Սամվել Անթոնյանը՝ տողատակում տալով մանրամասն ծանոթագրություններ (1969, Բ, 40—46):

«Վրթանես Քերթողը և պատկերամատուցությունը» վերնագրով մի հետաքրքիր հոդված է հրատարակել հոգևոր ճեմարանի դասախոս Երվանդ Մելքոնյանը (1970, Զ—Է, 86—97):

Հոդվածագիրը նախ ներկայացնում է պատկերամատուցությունը իբրև եկեղեցու ծոցում ծնված մի նշանավոր շարժում՝ տալով այդ շարժման առաջացման և զարգացման պատմությունը, և ապա ցույց տալիս հայ եկեղեցու դիրքավորումը այդ շարժման նրկատմամբ: Մենք ոչ թե պատկերներն ենք պաշտում, այլ նրանց վրա նկարված սրբերին ենք փառավորում և նրանցից բարեխոսություն խնդրում: Կորաքամակ պիտի չլինել նրանց առաջ և միայն նրանց վրա չդնել հույսը, ինչպես հեթանոսներն էին անում: Մենք խաչին և նկարներին երկրպագում ենք որպես միջնորդի՝ Աստուծո օգնությունը խնդրելու:

Հոդվածի Բ մասում հեղինակը ներկայացնում է Վրթանես Քերթողին իբրև նշանավոր եկեղեցական գործիչ և մատենագիր: Պետք է նշել, որ Երվանդ Մելքոնյանի սույն արժեքավոր հոդվածում, մեր վերջին ուսումնասիրությունների հիման վրա, որոշ անճշտություններ կան Վրթանես Քերթողի անձի վերաբերյալ՝ համարելով նրան և՛ կաթողիկոսական տեղապահ Դվինում, և՛ Սյունյաց վարդապետարանի աշակերտ, և՛ Քչկանորդի, Ծաղնասար և Տերանց նվիրակ: Իրականում այս երեք տվյալները վերաբերվում են նույն ժամանակում ապրած և գործած երեք տարբեր Վրթանեսների¹:

¹ Զ դարի երկրորդ կեսին և Է դարի սկզբներին հայ իրականության մեջ գործել են Վրթանես անունը կրող մի շարք նշանավոր անձինք: Զանազան հանգամանքներ հայ բանասերներից ոմանց առիթ են տվել շփոթելու միմյանց հետ այս անձնավորություններին և հանգելու սխալ եզրակացությունների: ԺԳ դարի պատմիչ Ստ. Օրբելյանն իր «Պատմությունն

Հոդվածի Գ մասում հոդվածագիրը անդրադառնում է թղթի բովանդակությանը և նրա արժեքին: Սույն թուղթը հրատարակվել է երկու անգամ. առաջինը 1852 թ. Հ. Գ. Զարբհանայանի «Յաղագս բարեխօսութեանց սրբոց» գրքի հավելվածում, իսկ երկրորդը՝ 1927 թ. «Սիռն» ամսագրում (էջ 23—25, 61—63)՝ հրատարակությամբ Եղիշե պատրիարք Դուրյանի:

հանգին Սիսական» (Թիֆլիս, 1910, էջ 98) աշխատության մեջ խոսում է մի Վրթանեսի մասին, որ սնվել ու մեծացել է Սյունյաց վարդապետարանում, Պետրոս եպս. Սյունեցու շնչի տակ, և եղել է Սյունյաց եպիսկոպոս ու մահացել 580 թ.: Ժ դարի պատմիչ Ուխտանեսն իր «Պատմություն հայոց» (Վաղարշապատ, 1871, էջ 59) գրքում խոսում է մեկ ուրիշ Վրթանեսի մասին, որը սնվել ու մեծացել է Դվինի կաթողիկոսարանում, գրել բազմաթիվ մատենագրական երկեր ու եղել կաթողիկոսական տեղապահ 604—607 թթ.: Ինքնըստինքյան այս ամենից կարելի էր եզրակացնել, որ դրանք տարբեր անձնավորություններ են: Բայց այստեղ կա մի հանգամանք, այն, որ Օրբելյանը Սյունյաց Վրթանես եպիսկոպոսին նույնացնում է կաթողիկոսական տեղապահի հետ: Եվ հավանաբար այս էլ եղել է շփոթության այն պատճառը, որը որոշ բանասերների հանգեցրել է սխալ եզրակացությունների, իսկ ոմանց էլ ստիպել լուրջությամբ անցնել այս հարցի վրայից: Միայն Մ. Ա. Օրմանյանն ու Հ. Աճառյանն են անցառում այս երկու Վրթանեսներին: Սակայն նրանցից հետո նույնպես բանասերներից շատերը կրկնում են նախորդների սխալները: Բերենք այստեղ մի քանի պատճառաբանություն միայն՝ ապացուցելու համար, որ այդ երկու Վրթանեսները նույն անձը չեն:

ա.—Սյունյաց Վրթանես եպիսկոպոսը մահացել է 580 թ.՝ Օրբելյանի վկայությամբ: Մինչդեռ Վրթանես Դվինցին (պայմանական անուն—Ե. Ա. Պ.) եղել է կաթողիկոսական տեղապահ 604—607 թթ. և նույնիսկ հիշվում է 617 թ.:

բ.—Ուխտանեսը վկայում է, որ Վրթանեսը սնվել և մեծացել է Դվինի կաթողիկոսարանում, իսկ Օրբելյանը՝ Սյունյաց վարդապետարանում:

գ.—Ուխտանեսը, լինելով հանդերձ Վրթանեսի կենսագիրը, որևէ տեղ չի հիշում, որ նա եղել է Սյունյաց եպիսկոպոս, մի հարց, որ երբևէ չէր անտեսի նա:

դ.—Օրբելյանը, ինչպես Բ. Ն. Ալիկյանն է ասում՝ «Ամենուր Սյունյաց փառք փնտրողը», որևէ ակնարկ չի անում այն մասին, որ Վրթանեսը մատենագրական գործեր ունի: Մինչդեռ տեղապահ Վրթանեսն աչքի է ընկնում իր բազմազան մատենագրական վաստակով:

Իսկ ինչ վերաբերում է Օրբելյանի վկայությանը, ապա շատ հավանաբար ժԳ դարի պատմիչը կարող է սխալված լինել: Ի դեպ նրա աշխատության մեջ հաճախ են հանդիպում այդպիսի սխալներ, որոնք մենք կարող ենք նշել անհրաժեշտության դեպքում:

Երվանդ Մելքոնյանը սույն թուղթը՝ հրատարակում է երրորդ անգամ՝ այս անգամ սակայն կազմելով թղթի համեմատական բնագիրը և տալով նաև աշխարհաբար թարգմանությունը:

«Էջմիածին» ամսագրում տպագրված դավանաբանական հոդվածներից առանձին արժեք է ներկայացնում Հ. Ս. Անասյանի «Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը» հոդվածը (1972, Ը, 27—36, Թ, 45—56), «Գիրք հաստատության եւ արմատ հաւատոյ» դավանաբանական ժողովածուի մասին:

«Գիրք հաստատության եւ արմատ հաւատոյ»-ն կամ, կրճատ ձևով՝ «Արմատ հաւատոյ»-ն կամ «Հաւատարմատ»-ն իր կառուցվածքով նման է «Կնիք հաւատոյ» ժողովածուին², որը կազմված էր է դարի սկզբներին, և Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն» գրքին³ հունարենից թարգմանված հայերենի Ե դարի վերջերին: Այս երկու ժողովածուների նման «Արմատ հաւատոյ»-ն դա-

Հայ բանասիրության մեջ Վրթանես տեղապահի անձնավորության հետ է շփոթվել նաև նույն դարում ապրող Բագրատունի Բշկան իշխանի որդի Վրթանես Վարդապետը (նույնպես իշխան), որին ուղղված մի թուղթ է գրել հունաց կայսրի կողմից Արևմտյան Հայոց ստրատեգատ Աշանակված Սորմենուր՝ ամբաստանելով Վրթանես տեղապահին: Պատասխան թըրթում Բագրատունի իշխան Վրթանեսը հանդես է գալիս ի պաշտպանություն Վրթանես տեղապահի: Այս մասին տե՛ս Եղիշե եպս. Գորյանի «Վրթանես Բերթոթ» հոդվածը («Միոն», 1928, էջ 10—11):

Ամփոփելով՝ Ձ դարում գործել են երեք Աշանակով Վրթանեսներ.

ա.—Վրթանես կաթողիկոսական տեղապահ (604—607 թթ.), հեղինակ «Յաղագս պատկերամարտից» երկի և բազմաթիվ նամակների: Անվել և մեծացել ու պաշտոնավարել է Դվինի Հայրապետանոցում:

բ.—Վրթանես Բագրատունի, Բշկան իշխանի որդի, հեղինակ Սորմենոս ստրատեգատիև ուղղված թղթի:

գ.—Վրթանես եպս. Սյունյաց (558—580 թթ.), աշակերտ Պետրոս Սյունեցու, որին 570-ական թթ. Հովհաննես Բ Գաբրելյան կաթողիկոսը, այլ եպիսկոպոսների հետ, գրել է մի թուղթ՝ գգուշանալու համար նևտորականներից (Օրբելյան, էջ 92): Նրանից մեկ որևէ մատենագրական գործ չի հասել:

² «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցու յողղապիտ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, յաւուրս Կոմիտաս կաթողիկոսի համահաւաքեալ», հրատարակություն Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի, Էջմիածին, 1914:

³ «Տիմոթեոսի եպիսկոպոսապետի Աղեքսանդրեայ Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի», հրատարակություն Կարապետ Ծ. վրդ. Տեր-Մկրտչյանի և Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի, Էջմիածին, 1908:

վանաբանական փճելի հարցերի վերաբերյալ կազմված վկայությունների ժողովածու է, որպես «առ ձեռն պատրաստ զեն» բաղկեղծական մտայնության ծավալման դեմ: «Արմատ հաւատոյ»-ն հիշյալ ժողովածուներից իր բովանդակությամբ տարբերվում է միայն նրանով, որ մինչ վերջիններս լոկ դավանական խնդիրներ էին ընդգրկում, «Արմատ հաւատոյ»-ն ընդգրկում է նաև ծիսական փճելի հարցեր:

Հ. Ս. Անասյանը Վարդան Այգեկցուն նվիրված իր մի ուսումնասիրության մեջ՝ տվել է «Արմատ հաւատոյ»-ի ընդհանուր նկարագրությունը և ներկայացրել այն հիմնական խնդիրները, որ ընդգրկում է այն: Բայց դեռ մնում էին լրացուցիչ բազմաթիվ հարցեր, որոնք պետք է քննվեին հետզհետե: Այդպիսիներից են ժողովածուի կրկնակ խմբագրությունների հարցը, նրա հեղինակի ինքնության հարցը, բնագրական կազմի վերականգնման հարցը, աղբյուրների հարցը, բնագրաբանական հարցեր և այլն: Ահա այդ հարցերից մի քանիսին է նվիրված պատասկավոր քանասերի և մատենագետի խնդրո առարկա հոդվածը:

Հողվածագիրը նախ անդրադառնում է «Արմատ հաւատոյ»-ի կրկնակ խմբագրությունների հարցին, պարզում, որ մեզ հասած «Արմատ հաւատոյ»-ի ձեռագրերը կազմում են երկու ուրույն խմբագրություններ՝ ընդարձակ և համառոտ: Այս փաստը անցյալում շփոթության է մատնել քանասերներից շատերին, որոնք առիթ են ունեցել հետաքրքրվելու դավանաբանական այս ժողովածուով:

Այնուհետև հեղինակը հանգամանորեն քննում է «Արմատ հաւատոյ»-ի հեղինակի ինքնության հարցը և բազմաթիվ պատմական ու մատենագիտական տվյալների հիման վրա ապացուցում, որ այս ժողովածուն կազմել է միջնադարի հայտնի առակագիր Վարդան Այգեկցին: Հ. Ս. Անասյանն այս հարցին անդրադարձել է նաև «Էջմիածին» ամսագրի 1969 թ. է.—Ը համարներում հրատարակված «Վարդան Այգեկցին որպես համերաշխության գաղափարախոս» հոդվածում (էջ 52—58):

Վերջում հողվածագիրը անդրադառնում է հեղինակային օրինակի հայտնաբերման հարցին և եզրակացնում, որ ընդարձակ խմբագրության բնագիրը, իր թերություններով հանդերձ, շատ մոտ է հեղինակային օրինակին և հիմնականում պահել է նրա կերպարանքը:

⁴ Հ. Ս. Անասյան, Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ, Վենետիկ, 1969: Արտատպված է «Բազմավեպ»-ի 1968 թ. հատորից:

Հ. Ս. Անասյանը ծրագրել է բոլոր օրինակների համեմատական ուսումնասիրությամբ վերակառուցել նրա բնագրական կազմը և այդ նկատառումով իր հոդվածին է կցել «Արմատ հաատոյ»-ի կառուցվածքային ընդհանուր պատկերը, որով մեզ համար ավելի ճանաչելի է դառնում «Արմատ հաատոյ»-ն, նախքան նրա բնագրային տեքստի հրատարակումը:

Մի այլ առիթով (ս. Ներսես Ընորհալու մահվան 800-ամյակ) Հ. Ս. Անասյանն «Էջմիածին» ամսագրում հրատարակում է «Ներսես Ընորհալին և «Արմատ հաատոյ» ժողովածուն» (1973, ԺԲ, 83—92):

Հոդվածագիրը նախ ներկայացնում է Ներսես Ընորհալու ժամանակ տեղի ունեցած հայ-քաղեղոնական դավանաբանական փնտրանությունները, այնուհետև անդրադառնում Վարդան Այգեկցու խմբագրած «Արմատ հաատոյ»-ին, մատնանշում Ընորհալու այն գործերը, որ օգտագործել է Վարդան Այգեկցին, և ապա մեջբերում «Արմատ հաատոյ»-ում եղած այն վկայությունները, որոնք Ընորհալու հեղինակությանն են պատկանում, հանգամանորեն վերլուծելով Ընորհալու և «Արմատ հաատոյ»-ի կապը ժամանակի պատմական իրադրության զարգացման ընթացքի մեջ:

«Վարդան Այգեկցին և «Արմատ հաատոյ» ժողովածուն» (գրախոսության փոխարեն) հոդվածում (1972, Գ, 37—43) Ս. Բոլանջյանը հանգամանորեն անդրադառնում է Հ. Ս. Անասյանի՝ Վենետիկում հրատարակած «Վարդան Այգեկցին իր նորահայտ երկերի լույսի տակ» աշխատությանը՝ գնահատելով այն գիտական աշխատանքը, որ արել է հեղինակը՝ բանասիրությանը ներկայացնելով երեք նորահայտ արժեքավոր գործեր, որով և Վարդան Այգեկցին ի հայտ է գալիս մեր միջնադարի երախտավորների շարքում, ունենում իր կենսագրությունը և իր արժանավույն տեղը գրավում հայ մատենագրության պատմության մեջ:

«Էջմիածին» ամսագրում հրատարակված հաջորդ դավանաբանական հոդվածը ստորագրել է Է. Մ. Բաղդասարյանը՝ «Հովհաննես Որոտնեցու դավանաբանական գրությունը Կոստանդին Ե Սսեցի կաթողիկոսին» վերնագրով (1973, Բ, 19—28):

Սույն գրությունը ծնվել է ԺԴ դարի երկրորդ կեսին տեղի ունեցող հայ-կաթոլիկ դավանաբանական պայքարի ժամանակ: Այդ պայքարում արևմուտքից քաղաքական ակնկալություններ ունեցող Կիլիկիայի հայոց կաթողիկոսարանը չէր կարող բացարձակ պայքար ծավալել: Դա պետք է ստանձներ բուն Հայաստանի հոգևորականությունը, ինչպես որ եղել էր արդեն ԺԳ դարում:

Այդ պայքարում, ի թիվս այլ հոգևորականների, գործուն մասնակցություն է ունենում նաև ականավոր գիտնական Հովհաննես վրդ. Որոտնեցին, որի լավագույն վկայություններից մեկն է նրա նորահայտ «Հաատոյ դասանութինք...» կոչված թուղթը՝ ուղղված Կոստանդին կաթողիկոսին, որը գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 557 ձեռագրի 1ա—15ր էջերում:

Է. Մ. Բաղդասարյանն այս հոդվածով նախ անդրադառնում է Հովհաննես վրդ. Որոտնեցու ծավալած գործունեությանը, ապա անդրադառնում խնդրո առարկա գրության իրդապատճառների և ժամանակի հետ կապված հարցերին:

Հոդվածագիրը վերջում հրատարակում է նաև վերոհիշյալ գրության բնագիրը, որն ունի հետևյալ խորագիրը. «Այս են հաատոյ դասանութինք, գոր գրեաց մեծ վարդապետն Յոհաննես Որոտնեցի հրամանա Խոյությունին ի Հայս, առ կաթողիկոսն տեր Կոստանդին»:

«Էջմիածին» ամսագրում տպագրված դավանաբանական վերջին հոդվածները կազմում են մի ամբողջություն, տողերիս հեղինակի ստորագրությամբ, ներկայացնելով միջնադարի մոռացված մատենագիրներից մեկի՝ նշանավոր վարդապետ, մեկնիչ և դավանաբան Մովսես Երզնկացու կյանքը, գործունեությունը և դավանաբանական գրությունները:

Այս հոդվածաշարի հեղինակը դեռ 1973 թ. հրատարակում է «Մովսես Երզնկացու «Հաատումն համառօտ մեկնութեան սրբոյ պատարագին, գոր յառաջագոյն արարեալ է սրբոց լուսաոր հարցն» աշխատությունը» (Թ, 14—20, ԺԱ, 43—48), որ և երևան է գալիս Մովսես Երզնկացին՝ որպես մի քանի դավանաբանական գրությունների հեղինակ:

Այնուհետև հրատարակվում է «Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ խորհուրդն ի թուին հայոց .2ԾԸ.» դավանաբանական թուղթը» (ուսումնասիրություն և բնագիր) հոդվածը (1974, Թ, 33—42, Ժ, 49—64), որ հեղինակը հանգամանորեն ներկայացնում է Մովսես Երզնկացուն որպես ժամանակի աչքի ընկնող հոգևորականներից մեկի: Հոդվածագիրը տալիս է Մովսես Երզնկացու ողջ մատենագրական վաստակի մանրամասն տեղեկատվությունը՝ անդրադառնալով նաև Երզնկացու կորած դավանաբանական գրություններին:

Խնդրո առարկա թուղթը ծնվել է ԺԴ դարի առաջին տասնամյակին ծավալված հայլատին հարաբերությունների ժամանակ:

իբրև հակաանտոյություն 1307 թ. Ստամ գումարված ազգային-եկեղեցական ոչ օրինական ժողովի, որի ընթացքում ժողովականները, Հեթոն Բ թագավորի զինվորական ճնշման տակ, ընդունել են Հոռոմից առաջարկված դավանաբանական և ծիսական փոփոխությունները, որոնց հիմնական նյութըն է եղել հաղորդության ս. բաժակի մեջ գինու հետ ջուր խառնելու խնդիրը:

Հողվածագիրը այն հանգամանորեն ուսումնասիրում է սույն թղթի գրության դրդապատճառների, ժամանակի և ներքին կառուցվածքի հետ կապված հարցերը, ապա հրատարակում բնագիրը՝ ըստ Երևանի Մարոտայ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2268 ձեռագրի (Էջ 74բ—84բ):

Մովսես վրդ. Երզնկացու մասին 3-րդ հողվածք տպագրվում է 1974, ԺԲ (41—42) և 1975 Ա (30—40) համարներում «Մովսես Երզնկացու «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հատուածեալն Գրիգոր երէց» դավանաբանական գրությունը» վերնագրով:

Մովսես վրդ. Երզնկացին սույն գրությունը գրել է Տրապիզոնի հունադավան Գրիգոր քահանայի՝ հայ եկեղեցու մասին արված ամբաստանագիր թղթին ի պատասխան, 1309 թ. առաջ:

Հողվածագիրը նախ անդրադառնում է գրության դրդապատճառների, ժամանակի և ներքին կառուցվածքի հարցերին, ապա

հրատարակում այն՝ ըստ Երևանի Մարոտայ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2678 ձեռագրի (Էջ 108բ—115ա):

Բացի նկարագրված վերոհիշյալ հողվածներից «Էջմիածին» ամսագրում հրատարակվել են նաև հայ դավանաբանական գրականության պատմության հետ երկրորդական կապ ունեցող մի շարք հողվածներ, որոնցից են Արտավազդ արքեպիսկոպոսի «Հայ-լատին հարաբերությունները հույն-լատին հարաբերությանց լույսով» (1945, Ա—Բ, 16—23, Գ—Դ, 19—24), Լ. Մ. Մեյլիքետ-Բեկի «Պողոս Տարոնեցի՝ ԺԱ—ԺԲ դարերի հայ մատենագիրը և թոնդրակեցի ու ծայթ հայերը» (1960, Դ, 38—44), Ա. Հատիտյանի «Արարատ»-ը և հայ դավանաբանական գրականությունը» (1968, ԺԱ—ԺԲ, 15—29), «Ս. Ներսես Ընդրհային և եկեղեցական միության հարցը» (1973, ԺԲ, 61—71), Հովհաննես քնն. Մարությանի «Հայ եկեղեցու դավանության վերաբերյալ հրատարակություններ Մայր Աթոռի տպարանից» (1972, ԺԲ, 56—65), «Հայ եկեղեցու դավանաբանական դիրքը» խմբագրականը (1969, Բ, 9—11) և այլ հողվածներ:

Ահա այս է, ընդհանուր գծերի մեջ, այն նկատուրը, որ արել է «Էջմիածին» ամսագիրը հայ դավանաբանական գրականության պատմության առանձին հարցերի լուսաբանման գործում:

